# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀՀ Կառավարությունը 2007թ. նոյեմբերի 23-ի N 1390-Ն որոշմամբ սահմանել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռքբերման կարգը և անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող 18 տարին լրացած և գործունակ յուրաքանչյուր անձ, եթե նա օրենքով սահմանված կարգով վերջին 3 տարին մշտապես բնակվել է Հայաստանի Հանրապետությունում, կարող է բացատրվել հայերեն լեզվով և ծանոթ է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը, կարող է դիմել Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար:

Պարզեցված կարգով՝ առանց վերջին 3 տարին Հայաստանի Հանրապետությունում մշտապես բնակվելու և հայերեն լեզվի իմացության պահանջների պահպանման Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանություններ և հյուպատոսական հիմնարկներ կարող են դիմել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող հետևյալ անձինք՝

1. այն անձը, որն ամուսնացել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու հետ կամ ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացի երեխա, այս դեպքում դիմողը անձամբ պետք է ներկայացնի.

- դիմում,
- ինքնակենսագրություն,
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/,
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար,
- տեղեկանք առողջական վիճակի մասին,
- տեղեկանք դատվածության մասին՝ այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է,
- աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթ, համապատասխանաբար՝

ա/ ամուսնության վկայականը և դրա պատճենը, ամուսնու անձնագիրը և դրա պատճենը կամ տեղեկանք ամուսնու քաղաքացիության մասին,

բ/ իր երեխայի ծննդյան վկայականը և դրա պատճենը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը հաստատող վկայականը և դրա պատճենը կամ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիրը և դրա պատճենը:

2. այն անձը, որի ծնողները կամ նրանցից մեկը նախկինում ունեցել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կամ ծնվել է Հայաստանի Հանրապետությունում և որը 18 տարին լրանալուց հետո 3 տարվա ընթացքում դիմել է Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու համար, այս դեպքում դիմողը անձամբ պետք է ներկայացնի.

- դիմում,
- ինքնակենսագրություն,
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/,
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար,
- տեղեկանք առողջական վիճակի մասին,
- տեղեկանք դատվածության մասին՝ այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է,
- աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթ,
- ծննդյան վկայականը և դրա պատճենը:

3. այն անձը, որը ծագումով հայ է, այսինքն՝ ունի հայ նախնիներ, այս դեպքում դիմողը անձամբ պետք է ներկայացնի.

- դիմում,
- ինքնակենսագրություն,
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/,
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար,
- տեղեկանք առողջական վիճակի մասին,
- տեղեկանք դատվածության մասին՝ այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է,
- աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթ,
- ծննդյան վկայականը և դրա պատճենը,
- հայկական ծագումը հաստատող փաստաթուղթը՝ ծնողի /պապի, տատի կամ քրոջ կամ եղբոր/ ծննդյան վկայականը և դրա պատճենը կամ ազգությունը հաստատող այլ փաստաթուղթ:

4. այն անձը, որը 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն, դուրս է եկել Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից, այս դեպքում դիմողը անձամբ պետք է ներկայացնի.

- դիմում,
- ինքնակենսագրություն,
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և

Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/,
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար,
- տեղեկանք առողջական վիճակի մասին,
- տեղեկանք դատվածության մասին՝ այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է,
- աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթ,
- ծննդյան վկայականը և դրա պատճենը:

Հայաստանի Հանրապետությանը բացառիկ ծառայություններ մատուցած անձանց կարող է շնորհվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն առանց վերը նշված բոլոր պահանջների:
Այս դեպքում անձը Հայաստանի Հանրապետության ոստիկանության անձնագրային և վիզաների վարչություն կամ օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դեսպանություն կամ հյուպատոսական հիմնարկ է ներկայացնում.
- դիմում,
- ինքնակենսագրություն,
- անձնագիրը և դրա պատճենը /քաղաքացիություն չունեցող անձը՝ իր վկայականը և դրա պատճենը կամ ճամփորդական փաստաթուղթը և Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթը և դրանց պատճենները/,
- 35 x 45 մմ չափսի 6 լուսանկար,
- տեղեկանք առողջական վիճակի մասին,
- տեղեկանք դատվածության մասին՝ այն երկրից, որտեղ վերջին 10 տարվա ընթացքում մշտապես կամ առավելապես բնակվել է,
-աշխատանքային գործունեության մասին փաստաթուղթ:

**ՀՀ քաղաքացիություն ձեռք բերած ծնողների մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն՝**

եթե ՀՀ քաղաքացիություն ձեռք է բերում ծնողներից մեկը, իսկ մյուսն օտարերկրյա քաղաքացի է կամ քաղաքացիություն չունեցող անձ, ապա նրանց մինչև 14 տարեկան երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն եթե առկա է ծնողների համաձայնությունը, կամ երեխան բնակվում է ՀՀ-ում և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ծնողի համաձայնությունը:

**ՀՀ քաղաքացիների կողմից որդեգրված երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն՝**

եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը քաղաքացիություն չունեցող անձ է, իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն:

Եթե երեխա որդեգրած ամուսիններից մեկը օտարերկրյա քաղաքացի է իսկ մյուսը՝ ՀՀ քաղաքացի, ապա երեխան ձեռք է բերում ՀՀ քաղաքացիություն, եթե՝

ա/ առկա է երեխային որդեգրած ամուսինների համաձայնությունը

բ/ երեխան բնակվում է ՀՀ-ում, և առկա է ՀՀ քաղաքացի հանդիսացող ողջ ծնողի ամուսնու համաձայնությունը.

գ/ երեխան քաղաքացիություն չունեցող անձ է կամ ՀՀ քաղաքացիություն ձեռք չբերելու դեպքում դառնում է քաղաքացիություն չունեցող անձ:

**Հայաստանի Հանրապետության քացաքացիությունը վերականգնելը**

ՀՀ քաղաքացիությունը կորցրած անձի քաղաքացիությունն, իր դիմումի համաձայն, կարող է վերականգնվել, եթե նա 1995 թվականի հունվարի 1-ից հետո, իր դիմումի համաձայն դուրս չի եկել ՀՀ քաղաքացիությունից և եթե նա չի զրկվել ՀՀ քաղաքացիությունից:

Բոլոր թվարկված դեպքերում, փաստաթղթերը ներկայացնելիս, դիմողը լրացնում է սահմանված ձևի հարցաթերթիկ: Բոլոր դեպքերում հյուպատոսական գանձումը կազմում է 5 CAD:

ՀՀ քաղաքացիություն ստանալու դիմումն անձամբ պետք է ներկայացնի ՀՀ դեսպանություն: ՀՀ դեսպանությունը ՀՀ քաղաքացիություն հայցող անձից փաստաթղթերը ստանալուց հետո ոչ ուշ, քան 10-օրյա ժամկետում անձի համար նշանակում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և հայոց լեզվի իմացության ստուգման օր: Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստացող անձանց Հայաստանի Հանրապետության Սահմանադրության իմացությունն ստուգվում է թեստավորման միջոցով, որը լրացվում է տեղում և որի համար տրամադրվում է մեկ ժամ ժամանակ:

Օտար լեզվով փաստաթղթերի հետ միասին անհրաժեշտ է ներկայացնել դրանց նոտարական կարգով վավերացված հայերեն թարգմանությունները: Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը շնորհվում է Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրով:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու վերաբերյալ դիմումները քննարկվում են մեկամսյա ժամկետում:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը շնորհվում է մեկ տարի հետո:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու դիմումի մերժումը կարող է չհիմնավորվել:

Դիմումի մերժման դեպքում կրկին կարելի է դիմել մերժման օրից մեկ տարի հետո:

Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որն ունի նաև այլ պետության /պետությունների/ քաղաքացիություն համարվում է Հայաստանի Հանրապետության երկքաղաքացի: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի:

Սույն նորմը տարածվում է նաև 1995 թվականի հունվարի 1-ից հետո, առանց սահմանված կարգի Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից դուրս գալու, այլ պետության քաղաքացիություն ձեռք

բերած, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունից միակողմանի հրաժարված քաղաքացիների վրա:

Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը:

Այլ պետության քաղաքացիություն ձեռք բերած Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերած այլ պետության քաղաքացին ազատվում է պարտադիր զինվորական ծառայությունից, եթե մինչև Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ձեռք բերելը ոչ պակաս, քան 12 ամիս ծառայել է այլ պետության զինված ուժերում կամ այլ պետությունում ոչ պակաս, քան 18 ամիս անցել է այլընտրանքային զինվորական ծառայություն, բացառությամբ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված պետությունների:

Երկքաղաքացին չի ազատվում զորահավաքից և վարժական հավաքից: